ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի ապրիլի 1 թիվ 98 -Ա

ԱՆԱՀԻՏ ԻՍՐԱԵԼՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՈՒՇԻԻ Ն. ԱՂԲԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.5 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 61-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով Անահիտ Իսրաելյանի 2026 թվականի մարտի 31-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անահիտ Իսրաելյանին 2026 թվականի ապրիլի 1-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ուշիի Ն. Աղբալյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար երեք ամիս ժամկետով՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ուշիի Ն. Աղբալյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անահիտ Իսրաելյանի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության
Արագածոտնի մարզպետ

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 4/1/2026 12:44:35 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. ապրիլի 1
ք. Աշտարակ